1580

Ференцій Ірен

2(075)
Ц-15

1912

1913 № 37.
03 AUG 2009

Բ. տարի
ԺԵ. տպ.

ԴԱՍԱՏԵՍՐ ԿՐՕՆԻ

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР

Համաձայն նորագոյն տրագրի

Սահակ ա. քհ. Սահակեանց

2(075)
Ս-15

ԹԻՖԼԻՍ

Տպարան «Իսպերացիոն», Ելիզաւետինսկայա № 17
1912

5769 Ա-15

ԴԱՍԱՏԵՍՐ ԿՐՕՆԻ

Բ. տարի
ԺԵ. տպ.

Ин-ут Востоковедения Академии Наук СССР

Սահակ ա. քհ. Սահակեան

ՀԱՄԱՁԱՅՆԵՆՈՐԱԳՈՅՆ ԾՐԱԳՐԻ

ԹԻՖԼԻՍ

Տպարան «Էջմիածնի», Ելիզաւետինսկայա № 17
1912

25 JUL 2013

1580

Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ

Տ. Տ. ԳԵՈՐԳ Ե.

Սրբազնագոյն Կաթողիկոսի Ամենայն Հայոց, Մայրագոյն Պատրիարքի Համազգական Նախամեծար Արարատեան Առաքելական Մայր Աթոռոյ Սրբոյ Կաթողիկէ Էջմիածնի։

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀԱՅԿ-Այմ. ՍՍՀ
Ա. ԻՄ. Ա. ՄԱՇՏՈՑԻ
ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ ԱՆՎԱՆ
36108-66

ՄԻ ՔԱՆԻ ԽՕՍՔ

Նորագոյն ծրագիրն արդէն հրատարակուած է և խստիւ պահանջւում է նրա անշեղ գործադրութիւնը։

Նորագոյն ծրագիրը պարտաւորական լինելով հանդերձ և այն ազատութիւնն է տալիս, որ ամեն մի ձեռնհաս անձն իրաւունք ունի իւր դիտողութիւններն ուղարկել ծրագիր մշակող Դպրոցական Ցանձնաժողովին, որպէսզի վերջինս օգտւելով մասնաւոր կարծիքներից, մշակէ վերջնական ծրագիր—հետևաբար ներկայ ծրագիրը և՛ պարտաւորական է և՛ ժամանակաւոր՝ գոնէ մի կամ երկու տարուայ համար։

Որպէսզի կրօնի դասատուներին դիւրութիւն տրուած լինենք մինչև նոր ծրագրի վերջնական կազմութիւնը՝ ես յարմար համարեցի իմ կազմած կրօնի դասագրերի առժամանակեայ գործադրութիւնը յարմարեցնել նորագոյն ծրագրին (մի քանի գլուխ դիտմամբ աւելացրած են՝ կապը պահպանելու համար)։

Կրօնուսոյցները, որպէս ուղեցոյց, կարող են օգտուել որոշած նիւթերի համար մեր հրատարակած Հին և Նոր ուխտերի Ուղեցոյցների համապատասխան գլուխներից։

Ցանկանք որ մատաղ սերունդը նոր դասագրերով ևս դաստիարակուի քրիստոնէական և հայ եկեղեցու

ոգւով՝ համաձայն գիտութեան պահանջների։ Իսկ այդ գաղափարների յեղյեղումները մենք շատ վաղուց ենք տուել կրօնի դասատուներին մեր հրատարակած Հին և Նոր-ուխտերի Ուղեցոյցներում։ Յուսանք պատուարժան կրօնուսոյցները ապագայում ևս շարունակեն օգտուել այդ նիւթերից՝ յօգուտ մատաղ սերնդի։

Ս. ա. Բհ. Ս.

Տփխիս, 1-ն նոյեմբ. 1911 թ.

ՆԱԽԱՊԵՏՆԵՐԻ ԴԱՐ

Ա. ԱԲՐԱՀԱՄ

1. ԱՍՏՈՒԱԾ ԿԱՆՉՈՒՄ Է ԱԲՐԱՀԱՄԻՆ

Ա. Միջագետքի Խառան քաղաքում Սեթի ցեղից մի մարդ էր ապրում՝ անունն Աբրահամ։ Նրա հայրը և բոլոր խառանցիները կուռք էին պաշտում, իսկ ինքը՝ ճշմարիտ Աստծուն։ Աստուած ասաց Աբրահամին. «Թող քո հայրենիքը, բարեկամներդ, հօրդ տունը և գնա Քանանացւոց երկիրը. ես քեզ այնտեղ մեծ ազգ կդարձնեմ և կօրհնեմ։ Քո ձեռով պէտք է օրհնուեն երկրիս բոլոր ազգերը։ Քո ցեղից մէկը կծնի և աշխարհիս բոլոր մարդոց բաղդաւոր կդարձնէ»։

Բ. Սրանից ետոյ Աբրահամն իսկոյն դուրս եկաւ Խառանից. հետն առաւ իւր կին Սառային, եղբօրորդի Ղովտին, ազգականներին, իւր հարստութիւնը ու գնաց դէպի Քանան։ Երբ Քանա-

նացուց երկրի Սիւքէմ հովիտը հասաւ, Աստուած նորից երևաց Աբրահամին ու ասաց. «Ահա սա է իմ խոստացած երկիրը, որ տալիս եմ քեզ և քո որդւոց»։ Աբրահամն այնտեղ սեղան շինեց և Աստծուն շնորհակալութիւն արաւ։



2. ԱԲՐԱՀԱՄԸ ԵՒ ՂՈՎՏԸ ԲԱԺԱՆՈՒՄ ԵՆ ԻՐԱՐԻՑ

Աբրահամը մի հարուստ մարդ էր—ունէր շատ խաշներ, ոսկի և արծաթ։ Ղովտը ևս հարուստ էր—նա էլ ունէր բազմաթիւ խաշներ և վրաններ։ Նրանք բնակւում էին Սիւքէմի և Ցոր-

գանանի հովտում, բայց այդ տեղը շատ փոքր էր, այնպէս որ խաշներին բաւականութիւն չէր տալիս, դրա համար ևս շարունակ կռիւ էր պատահում Ղովտի և Աբրահամի հովիւների մէջ։

Մի անգամ Աբրահամն ասաց Ղովտին. «Ի՞նչու պէտք է մեր հովիւների մէջ կռիւ պատահի. չէ՞ որ մենք ազգականներ ենք. արի բաժանուենք։ Եթէ դու ձախ գնաս, ես աջ կերթամ, իսկ եթէ դու աջ գնաս, ես ձախ կերթամ։

Ղովտն ընտրեց ամենալաւ մասը—ջրերով հարուստ Ցորդանանի պտղաւէտ հովիտը, իսկ Աբրահամը բնակուեց Քեբրոնի մօտ գտնուող Մամբրէի անտառում։ Ղովտի վրանները հասնում էին մինչև Սոդոմ քաղաքը, որի բնակիչները շատ վատ մարդիկ էին—Աստծու ճանապարհով չէին գնում։

3. ԱԲՐԱՀԱՄՆ ԱԶԱՏՈՒՄ Է ՂՈՎՏԻՆ

Մի անգամ հարևան չորս թագաւորներ պատերազմ ունեցան Սոդոմ և Գոմոր քաղաքների թագաւորների հետ։ Սրանք յաղթուեցան, ժողովուրդը փախաւ լեռները։ Թշնամին խլեց Սոդոմ և Գոմոր քաղաքների հարստութիւնը։ Ղովտն ևս գերի ընկաւ իր խաշներով։

Ղովտի ծառաներից մինը գիշերով փախաւ, շտապով եկաւ Աբրահամի մօտ և յայտնեց, որ

նրա եղբօրորդին գերի է ընկել։ Աբրահամը, երբ իմացաւ, իսկոյն հաւաքեց իւր երեք հարիւր տասն և ութ ծառաներին. ընկաւ թշնամու ետևից. գիշերով յարձակուեց նրանց վրայ. ջարդեց. ետ առաւ աւարը և ազատեց Ղովտին։

Երբ Ամրահամը պատերազմից վերադառնում-էր, Սոդոմի թագաւորը նրա առաջ դուրս եկաւ ու ասաց. «Գերի առած մարդիկն ինձ, իսկ աւարը քեզ լինի»։ Աբրահամը պատասխանեց. «Ոչ, ես մի արեխի թել անգամ չեմ վերցնի—բոլորն էլ քեզ լինի»։ Աբրահամը դարձաւ Քեբրոն։

4. ԻՍՀԱԿԻ ԾՆՈՒՆԴԸ ԵՒ ԶՈՀՈՒԻԼԸ

Ա. Քսան և հինգ տարի Աստծու խոստումից ետոյ Սառան մի որդի ունեցաւ, որի անունը Իսահակ դրին։ Աբրահամն արդէն հարիւր տարեկան էր։ Նա շատ էր ուրախանում։

Բ. Մի քանի տարուց ետոյ Աստուած Աբրահամին փորձելու համար՝ ասաց. «Աբրահամ, վեր առ քո միակ որդի Իսահակին և գնա Մորէայի երկիրն ու այնտեղ իմ ցոյց տուած լեռան վրայ զոհիր նրան»։ Աբրահամն առաւօտը վաղ վեր կացաւ. համեստեց էշը. փայտ պատրաստեց զոհի համար. հետն առաւ Իսահակին և երկու ծառայ ու գնաց Աստծու ցոյց տուած երկիրը։ Երեք օ-

րից ետոյ տեղ հասան։ Աբրահամն ասաց իւր ծառաներին. «Մնացէք այստեղ, իսկ ես Իսահակի հետ պէտք է գնամ վերև աղօթելու»։

Իսահակը մատաղի փայտը շալակեց, իսկ Աբրահամը ձեռին բռնած ունէր զոհի կրակն ու

դանակը։ Ճանապարհին Իսահակը հարցրեց հօրը. «Հայր, կրակն ու փայտն այստեղ են, բայց ո՞ւր է մատաղացու ոչխարը»։ Աբրահամը պատասխանեց. «Աստուած ինքը տեսնում է մատաղացուն»։

Երբ նրանք լերան դագաթը հասան, Աբրահամը

սեղան շինեց. փայտը դասեց վրան. որդուն

դրեց փայտերի վրայ. վեր առաւ դանակը, որ Իսահակին զոհէ։

Այն ժամանակ Աստծու հրեշտակը ձայն տուաւ երկնքից ու ասաց. Աբրահամ, Աբրահամ, ձեռդ եւ քաշիր, ես իմացայ, որ դու Աստծունս սիրում ես։ Ահա այն թուփը, որի մէջ մի ոչխար կայ, վեր առ և զոհիր Իսահակի փոխարէն»։ Աբրահամն այդպէս էլ արաւ։

Աստծու հրեշտակը նորից ձայն տուաւ Աբրահամին ու ասաց. «Որովհետև քո միակ որդին չխնայեցիր, ուստի ես քեզ օրհնում եմ. քո զաւակները թող երկնքի աստղերի ու ծովի ափի աւազի չափ բազմանան—քեզնով պէտք է օրհնուեն երկրիս բոլոր ազգերը»։

Աբրահամն եկաւ ծառաների մօտ և միասին դարձան Քեբրոն։

5. ՍԱՌԱՅԻ ՄԱՀԸ

Սառան հարիւր քսան և եօթը տարեկան հասակում մեռաւ Քեբրոնում։ Աբրահամն սկսաւ լալ և սուգ անել։ Երբ սգի օրերն անցան, վեր կացաւ ու ասաց քեբրոնցիներին. «Խնդրեցէք Եփրոնին, որ իմ ագարակի ծայրումը գտնուող Կրկին-Այրն ինձ վաճառէ, որպէսզի իմ մեռելն այնտեղ թաղեմ»։ Եփրոնն ինքը եկաւ և ասաց.

«Ագարակն արժէ չորս հարիւր ոսկեր, թաղիր քո մեռելն այնտեղ»։ Մարդկանց առաջ Աբրահամը



կշռեց արծաթը և տուաւ նրան։ Աբրահամը Սառային թաղեց Կրկին-Այրի մէջ։

6. ԻՍԱՀԱԿԻ ԱՄՈՒՍՆՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԱԲՐԱՀԱՄԻ ՄԱՀԸ

Աբրահամը շատ էր ծերացել. ուզում էր մեռնելուց առաջ Իսահակին պսակել, ուստի կանչեց աւագ ծառայ Եղիազարին ու ասաց. «Կգնաս Խառան և այնտեղ իմ ազգականներից Իսահակի համար մի հարսնացու կընտրես»։ Եղիազարն առաւ իւր հետ մի քանի ծառաներ, տասն ուղտ և շատ ընծաներ ու ճանապարհ ընկաւ դէպի Խառան քաղաքը։ Երբ տեղ հասաւ, ուղտերին հանգիստ տուաւ քաղաքից դուրս՝ մի ջրհորի մօտ։

Արևը մտնելու ժամանակն էր։ Կանայք այդ ժամին գալիս էին ջուր տանելու։ Եղիազարն աղօթեց և ասաց. «Աբրահամի Աստուած, յաջողիր իմ գործը. այս քաղաքի աղջիկներն ահա կգան ջուր հանելու, եթէ մի կոյս աղջիկ գայ և ես նրան ասեմ՝ կռացրու սափորդ ու ինձ ջուր խմացրու և նա էլ խմացնէ, նա կլինի Իսահակի կինը»։

Հազիւ թէ այս խօսքերը վերջացրել էր, եկաւ Աբրահամի եղբայր Բաթուէլի դուստր Ռեբեկան՝ սափորն ուսին։ Նա մի գեղեցիկ աղջիկ էր։ Իջաւ ջրհորը, լցրեց սափորը և կրկին բարձրացաւ։ Եղիազարը դիմեց նրան և ասաց. «Թոյլ տուր

ինձ, որ փոքր ինչ ջուր խմեմ քո սափորից»։ Նա էլ պատասխանեց. «Խմիր»։ Այս ասաց՝ շտապով սափորը կռան վրայ իջեցրեց և օտարականին ջուր տուաւ։ Նա ուղտերին էլ խմացրեց։

Խմելուց ետոյ՝ Եղիազարը Ռեբեկային մի ոսկեայ գինտ և երկու ապարանջան ընծայեց ու հարցրեց. «Ո՞ւմ աղջիկն ես, արդեօք քո հօր մօտ այս գիշեր կարելի է հիւր լինել»։ Նա պատասխանեց և ասաց։ «Ես Բաթուէլի աղջիկն եմ, մենք շատ

խոտ ու դարման ունենք քո ուղտերի համար, նոյնպէս քեզ և անասունների համար իջևանելու տեղ»։

Ռեբեկան վազեց և պատմեց մօրն այս ամենը։ Նա մի եղբայր ունէր Լաբան անունով։ Երբ սա տեսաւ քրոջ գնտերը և ապարանջանները, վազեց դէպի ջրհորը և այն օտարականին



տուն հրաւիրեց։ Երբ տուն եկան, ջուր բերեց ոտները լուանալու, որից ետոյ կերակուր ևս բերեցին։ Եղիազարը պատասխանեց. «Ես հաց չեմ ուտի մինչև իմ միտքը չյայտնեմ»։ Եղիազարը յայտնեց իւր ով լինելը. թէ ինչու է եկել և թէ ինչ է աղօթել ջրհորի մօտ։

Բաթուէլը և Լաբանը պատասխանեցին. «Ու-

ըեմն այդ Աստծու կամքն է, մենք զրա դեմ ինչ կարող ենք ասել, վեր առ Ռեբեկային և տար»։ Մի քանի օրից Եսայ Ռեբեկան իւր ընկերուհիների հետ ճանապարհ ընկաւ դէպի Քեբրոն։

Իսահակը երեկոյեան ժամանակ դաշտ էր գուրս եկել զբօսնելու— նա տեսաւ հեռուից, որ տասն ուղտ է գալիս։ Ռեբեկան ևս նկատեց Իսահակին և հարցրեց ծառային. «Ո՞վ է այն մարդը, որ դաշտի մէջ զբօսնում է»։ Ծառան պատասխանեց. «Նա իմ տէրն է»։ Եղիազարը պատմեց Իսահակին ամեն բան։ Այնուհետև Իսահակը պսակուեց Ռեբեկայի հետ և միասին էին ապրում։

Աբրահամը իւր բոլոր հարստութիւնը Իսահակին տուաւ և մեռաւ հարիւր եօթանասուն հինգ տարեկան հասակում։

Իսահակը թաղեց նրան Կրկին-Այրի մէջ՝ Սառայի մօտ։

Բ. ԻՍՀԱԿ

7. ԵՍԱԻ ԵՒ ՅԱԿՈՎԲ

Իսահակը երկու որդի ունեցաւ—մեծի՝ անդրանկի անունը Եսաւ էր, իսկ փոքրիկը՝ Յակովը։

БИБЛИОТЕКА ИНСТИТУТА ВОСТОКОВЕДЕНИЯ Академия Наук СССР

Եսաւը մաղոտ էր, պարապում էր որսորդութիւնով ու հողագործութիւնով, իսկ Յակովը մնում էր տանը և մօրն օգնում տան գործերում։ Իսահակը Եսաւին էր սիրում, որովհետև նրա բերած որսի միսը ախորժակով էր ուտում, իսկ Ռեբեկան՝ Յակովին։

Մի անգամ Յակովը ոսպէ թան էր եփել։ Եսաւը որսից դադրած տուն դարձաւ և ասաց եղբօրը. «Քո ոսպէ թանից մի քիչ էլ ինձ տուր»։ Յակովը պատասխանեց. «Ծախիր քո անդրանկութիւնը, եսայ կստանաս ոսպէ թանը»։ Եսաւն ասաց ինքն իրան. «Ես սովից մեռնում եմ, ինչիս է պէտք անդրանկութիւնը»։ Յակովն ասաց. «Ուրեմն երդուիր, որ խօսքդ ետ չես առնի»։ Եսաւը երդուեց։ Այն ժամանակ Յակովը տուաւ նրան ոսպէ թանից։ Եսաւը կերաւ, խմեց, վերկացաւ և գնաց։ Այսպէս Եսաւը մի բաժին ոսպէ թանով ծախեց իւր անդրանկութիւնը։

36108-66

8. ՅԱԿՈՎԲԻ ԹԱԲԵԲԱՅՈՒԹԻՒՆԸ

Իսահակը հարիւր երեսուն եօթը տարեկան էր—նրա աչքերը լաւ չէին տեսնում, նա զգում էր իւր մահը, ուստի կանչեց Եսաւին և ասաց. «Ես շուտով կմեռնեմ. գնա դաշտ. որսի միս բեր. ինձ համար խորտիկ պատրաստիր, որ ուտեմ և օրհնեմ քեզ վերջին անգամ»։

ՀՍՍՌ ԳԱ Գրքի ՀՍՍ Գրադարան ՀՍՍՌ-Արմ ССР

ՊԵՏ. ՄԱՏԵՆ
ԱՄԻՍԻՆՅԱ
ՊԵՏԱԿԱՆ ՀԱՅԿ
ՍՍՍՌ

Ռեբեկան լսեց այս խօսակցութիւնը, կանչեց Յակովբին և ասաց. «Լսեցի որ հայրդ Եսաւին ասաց—գնա դաշտ. որսի միս բեր. ուտեմ և օրհնեմ քեզ։ Ուրեմն լսիր ինձ, շտապիր խաշների մօտ և երկու ուլ բեր, հօրդ սիրած խորտիկը պատրաստեմ, տար որ ուտէ և օրհնէ քեզ վերջին անգամ»։ Յակովբը պատասխանեց.

«Իմ եղբայր Եսաւը մազոտ է, իսկ ես՝ լերկ, գուցէ շօշափէ ինձ և ես խաբեբայ դուրս գամ»։ Մայրը պատասխանեց. «Գնա և այնպէս արա, ինչպէս քեզ ասացի»։

Յակովբը գնաց, ուլեր բերաւ և մօրը տուաւ։ Նա էլ կերակուր պատրաստեց. Եսաւի թանկագին շորերը հագցրեց Յակովբին. ուլի մորթին թևերին ու պարանոցին փաթաթեց, որ հայրը չճանաչէ և կերակուրն էլ ձեռը տուաւ։ Յակովբը գնաց հօր մօտ և ասաց. «Հայր, վեր կաց իմ բերած խորտիկը կեր ու օրհնիր ինձ»։ Իսահակը զարմացաւ ու հարցրեց. «Այդ ի՞նչպէս շուտ գտար որսը»։ Նա պատասխանեց. «Աստուած ինքն էր պատրաստել այդ»։

Իսահակը իւր կասկածն ստուգելու համար՝ ասաց. «Մօտ արի, որդեակ, որ քեզ շօշափեմ, տեսնեմ իմ որդի Եսաւն ես՝ թէ ոչ»։ Յակովբը մօտեցաւ. հայրը շօշափեց և ասաց. «Ձայնդ Յակովբի ձայնն է, իսկ ձեռները՝ Եսաւինը»։ Հայրը թէև չճանաչեց, բայց կասկածեց, ուստի մի անգամ էլ հարցրեց. «Դու իմ որդի Եսաւն ես»։ Նա պատասխանեց. «Այո, ես եմ»։ Իսահակն ասաց. «Ուրեմն մօտ բեր խորտիկը»։ Յակովբը մօտեցրեց նրան կերակուրը. գինի ևս տուաւ։ Հայրը կերաւ, խմեց, օրհնեց ու ասաց. «Երկնքի ցօղը անպակաս լինի. քս արտերը և այգիները ցորենով և գինիով լցուին. ազգերը ծառայեն քեզ, եղբօրդ վրայ տէր լինես»։

Յակովբը՝ դեռ նոր էր հեռացել, որ Եսաւը որսից վերադարձաւ։ Նա նոյնպէս խորտիկ պատրաստեց և հօրը բերաւ։ Իսահակը հարցրեց նը-րան. «Ո՞վ ես դու»։ Նա պատասխանեց. «Քո անդրանիկ որդի Եսաւն եմ»։ Իսահակը շատ զար-մացաւ այս բանի վրայ և ասաց. «Հապա այն ո՞վ էր, որ մի փոքր առաջ ինձ համար խորտիկ բերաւ, ես էլ կերայ ու օրհնեցի նրան»։

Եսաւը հասկացաւ, թէ ինչ է պատահել, բարձր ձայնով լաց եղաւ ու ասաց. «Հայր, ինձ ևս օրհնիր»։ Իսահակը պատասխանեց. «Եղբայ-րըդ խորամանակ կերպով ինձ մօտ եկաւ և քո օրհնութիւնն ստացաւ»։ Եսաւը նեղացած սրբ-տով ասաց. «Մի՞թէ դու մի օրհնութիւն ունիս, հայր, ինձ ևս օրհնիր»։ Իսահակը պատասխանեց և ասաց. «Թոռ քո բնակած երկիրը ևս պտղա-ւէտ լինի, միայն Յակովբին պիտի լսես—նա քո մեծը կլինի»։

Գ. ՅԱԿՈՎԲ

9. ՅԱԿՈՎԲԻ ՓԱԽՈՒՍՏԸ

Այս բանից ետոյ Եսաւը խիստ ատում էր Յակովբին. Նա ասում էր. «Երբ հայրս մեռնի, ես կսպանեմ նրան»։

Այս բանը Ռեբեկան իմացաւ, ուստի Յա-կովբին իւր մօտ կանչեց և ասաց. «Եսաւը մտա-ծում է քեզ սպանել։ Գնա Խառան իմ եղբայր Լաբանի մօտ, մնա այնտեղ մինչև եղբօրդ բար-կութիւնը կանցնէ»։ Ռեբեկան Իսահակի հետ ևս խօսեց այդ մասին։ Նա էլ կանչեց Յակովբին, որ արդէն եօթանասուն եօթը տարեկան էր և դեռ չէր ամուսնացած ու ասաց. «Գնա Միջա-գետք՝ Բաթուէլի մօտ և ամուսնացիր Լաբանի աղջիկների մէկի հետ»։ Յակովբը լսեց ծնողնե-րին և գնաց դէպի Միջագետք։

Յակովբը դուրս եկաւ Բերսաբէից ու գնաց դէպի Խառան։ Արևը մտնելու ժամանակ մի քար վեր առաւ. դրեց գլխի տակ ու քնեց։

Այստեղ երազում մի սանդուխտ տեսաւ, ո-րի ծայրը երկնքումն էր. վրայով Աստծու հրեշ-տակները բարձրանում, իջնում էին։ Աստուած սանդուխտի վերևից ասում է. «Ես եմ Աբրահա-մի և Իսահակի Աստուածը. այս երկիրը քեզ և քո ժառանգներին եմ տալիս. քո զաւակները եր-կնքի աստղերի և ծովի աւազի չափ կբազմա-նան. ես քեզ կպաշտպանեմ և նորից հայրենիք կվերադարձնեմ»։

Երբ Յակովբը քնից զարթեց, զարմացած ա-սաց. «Աստուած այստեղ է եղել, իսկ ես չեմ իմա-ցել—այս տեղը սուրբ է, Աստծու տունն է, երկնքի դուռն է», Յակովբը վեր առաւ այն քարը, որի

վրայ քնել էր, արձան կանգնեցրեց. իւղ ածեց

նրա վրայ. օծեց և այն տեղն անուանեց Աստուծու տուն, այսինքն Բեթել։

10. ՅԱԿՈՎԲԸ ԼԱԲԱՆԻ ՄՕՏ

Ա. Յակովբը Բեթելից ուրախ-ուրախ գնաց իւր մօրեղբայր Լաբանի մօտ։ Խառանի մօտ մի ջրհոր տեսաւ, որի շուրջը երեք ոչխարի հօտ կար։ Ջրհորի բերանին ձգած էր մի մեծ քար։ Յակովբը հարցրեց հովիւներին. «Ո՞րտեղացի էք, եղբայրներ»։ Նրանք պատասխանեցին. «Խառանից ենք»։ Յակովբը կրկնեց. «Ճանաչո՞ւմ էք Բաթուէլի որդի Լաբանին»։ Նրանք պատասխանեցին. «Այո՛, ահա՛ նրա աղջիկ Հռաքէլն էլ գալիս է իւր ոչխարների հետ»։ Յակովբը Հռաքէլին տեսնելուն պէս՝ մօտեցաւ. համբուրեց նրան. լաց եղաւ և յայտնեց, որ ինքը Ռեբեկայի որդին է։ Հռաքէլը տուն վազեց յայտնելու հօրը։ Երբ Լաբանն իմացաւ այս, եկաւ նրա մօտ, համբուրեց ու տուն տարաւ։ Յակովբը պատմեց Լաբանին իւր գլխովն անցածը։

Բ. Յակովբը ծառայում էր Լաբանին։ Մի ամիս անցնելուց ետոյ՝ Լաբանն ասաց Յակովբին. «Թէև դու իմ ազգականն ես, բայց և այնպէս չէի կամենայ, որ ինձ ձրի ծառայես. ասա՛, ի՞նչ է քո աշխատանքի վարձը»։ Լաբանը երկու աղջիկ ունէր—մեծի անունը Լիա էր, փոքրինը՝ Հռաքէլ։ Լիան տգեղ էր, իսկ Հռաքէլը՝ գեղեցիկ։ Յակովբը Հռաքէլին հաւանում էր, դրա համար

էլ ասաց Լաբանին. «Ես քեզ եօթը տարի կծառայեմ, եթէ Հռաքէլին ինձ կին կտաս»։ Լաբանը պատասխանեց. «Շատ բարի, աւելի լաւ է քեզ տամ՝ քան թէ մի ուրիշին»։ Յակովբը եօթը տարի ծառայեց Լաբանին։

Երբ եօթը տարին անցաւ, Լաբանը հարսա-

նիք արաւ, բայց փոխանակ Հռաքէլին՝ Լիային տուաւ։ Այն ժամանակ Յակովբն ասաց Լաբանին։ «Ի՞նչու խաբեցիր ինձ, ես քեզ Հռաքէլի համար եօթը տարի ծառայեցի և ոչ թէ Լիայի»։ Լաբանը պատասխանեց. «Մեր երկրում սովորութիւն չէ, որ փոքր քոյրը մեծից վաղ մար-

դու գնայ, եթէ դու ինձ նորից եօթը տարի կծառայես, Հռաքէլին էլ կտամ»։ Յակովբը եօթը տարի ևս ծառայեց ու Հռաքէլին էլ առաւ։

Յակովբը շատ որդիներ ունեցաւ։ Նա Լաբանին վեց տարի ևս ծառայեց և փոխարէնն ստացաւ շատ ոչխարներ։ Բացի դրանից ունէր բազմաթիւ ծառաներ, աղախիններ, ուղտեր և էշեր—նա էլ Լաբանի չափ հարստացաւ։

11. ՅԱԿՈՎԲԻ ԴԱՐՁԸ ԽԱՌԱՆԻՑ

Լաբանի որդիները նախանձում էին Յակովբին, նրանք ասում էին. «Յակովբը մեր հօր կայքը իրեն սեպհականեց»։

Յակովբն ինքն ևս նկատում էր այդ նախանձը և կամենում էր հայրենիք վերադառնալ, դրա համար Աստուած ասաց Յակովբին. «Դարձիր Քանան, ես քեզ կպաշտպանեմ»։ Յակովբը պատմեց այս բանը Լիային ու Հռաքէլին. նրանք էլ ասացին. «Արդ ինչպէս որ Աստուած հրամայել է քեզ։ Այսպէս Յակովբն առաւ իւր որդւոցն ու կանանցը, խաշներն ու բոլոր հարստութիւնը և փախաւ Քանան։

Այդ ժամանակ Լաբանը տանը չէր, դաշտ էր գնացել ոչխարները խուզելու։

Երրորդ օրը Լաբանն իմացաւ Յակովբի փա-

խուսաբը և ընկաւ նրա ետևից։ Եօթն օրից ետոյ հասաւ նրան Գաղաատ լերան մօտ։ Աստուած ճանապարհին տեսիլքում զգուշացրեց Լաբանին ու ասաց. «Զգոյշ կաց, Յակովբի հետ սիրով վարուիր»։ Երբ հասաւ, Լաբանը Յակովբին յանդիմանեց ու ասաց. «Ի՞նչու ծածուկ հեռացար. ի՞նչու ինձ չյայտնեցիր, որ ես քեզ երգով, թմբուկով ճանապարհ ձգէի. ի՞նչու իմ աղջիկներին ու թոռներին առանց հաժբոյրի հեռացրիր։ Դու ինձնով հարստացար, քո արածը լաւ բան չէ»։

Յակովբը պատասխանեց Լաբանին և ասաց,

«Ի՞նչ եմ արել քեզ, որ ետևիցս ընկել ես. այդքան այծ ու ոչխար որ ունիս, բոլորն էլ իմ քրտինքի պտուղն է—ինչ որ գազանները պատառում էին, այն էլ ինձնից էիր պահանջում. ցերեկները արևակէզ էի լինում, իսկ գիշերները ցրտից չորանում։ Այս ձևով ես քսան տարի քեզ ծառայել եմ»։

Թէև Լաբանն ուզում էր խլել Յակովբի ոչխարները, բայց որովհետև Աստուած նրան զգուշացրել էր, ուստի ասաց. «Ես ի՞նչ կարող եմ անել աղջիկներիս և թոռներիս, լաւն այն է, որ հաշտուենք և դաշը կապենք»։ Յակովբն ու Լաբանը հաշտուեցան. Աստծու առաջ երդուեցին և դաշը կապեցին։ Պայմաններից մէկն էլ այն էր, որ Յակովբը Լաբանի աղջիկներին չպէտք է ծեծէր։ Յակովբը զոհ արաւ և հացի հրաւիրեց բոլորին։ Առաւօտը Լաբանը համբուրեց աղջիկներին ու թոռներին. օրհնեց նրանց և ետ դարձաւ տուն, իսկ Յակովբը շարունակեց ճանապարհը։

12. ԵՍԱԻ ԵՒ ՅԱԿՈՎԲԻ ՀԱՇՏՈՒԹԻՒՆԸ

Յակովբը թէև Լաբանից ազատուեց, բայց քանի լիշում էր, որ մօտենում է Եսաւի երկրին, վախենում էր, ուստի մարդիկ ուղարկեց Սեղմ (Սէիր) երկիրը, որ Եսաւի սիրտը շահեն։

Նա պատուիրեց գնացողներին այսպէս խօսեն. «Քո ծառայ Յակովբն այսքան ժամանակ Լաբանի մօտ էր. մեզ ուղարկել է քեզ մօտ՝ ներողութիւն է խնդրում»։ Գնացողները դարձան և ասացին. «Քո եղբայր Եսաւը չորս հարիւր մարդով քեզ դիմաւորելու է գալիս։ «Յակովբը շատ վախեցաւ այս բանից. իսկոյն ծառաներն ու խաշները երկու մասի բաժանեց այն մտքով, որ եթէ եղբայրը մի մասը խլէ, միւսը կարողանայ ազատել։

Յակովբն առաւօտը վաղ առաւ իւր կանանցն ու որդուոցը և գնաց Եսաւի առաջ։ Տեսնելուն պէս՝ իսկոյն որդիները մայրերին յանձնեց. ինքն առաջ գնաց և եօթն անգամ ծնկաչոք գըլուխ տուաւ։ Եսաւն այս ղղջումը տեսնելուն պէս՝ փոխեց իւր միտքը—առաջ վազեց. գրկեց Յակովբին. վզովն ընկաւ ու համբուրեց նրան։ Երկուսն էլ լալիս էին։

Եսաւն ասաց. «Շտապենք, միասին գնանք»։ Յակովբը պատասխանեց. «Ծծկեր մանուկներ ունեմ, ոչխարները ևս նոր են ծնել, եթէ ստիպեմ շուտ-շուտ գնալու, բոլորն էլ կկոտորուեն. դու առաջ գնա, իսկ ես կամաց-կամաց կգամ»։ Եսաւը եդոմ դարձաւ, իսկ Յակովբը գնաց դէպի Սիքէմ։ Այնտեղից անցաւ Բեթէլ և Տիրոջ հրամայեցեալ պատրաստեց նրանք փոքր ևս առաջ գընացին. այստեղ Հռաքէլը մեռաւ։ Յակովբը թաղեց նրան և վրան մի արձան կանգնեց։

Յակովբն եկաւ Իսահակի մօտ։ Նա բնակուում էր Մամբրէում՝ ոչ հեռի Քեբրոնից։ Իսահակը ծերացել էր—նա մեռաւ հարիւր և ութսուն տարեկան հասակում։ Եսաւն ու Յակովբը թաղեցին Իսահակին Աբրահամի գնած Կրկին-Այրի մէջ։

Գ. ՅՈՎՍԷՓ

13. ՅՈՎՍԷՓԻ ԵՂԲԱՅՐՆԵՐԸ ԵՒ ՆՐԱ ՎԱՃԱՌՈՒՄԸ

Ա. Յակովբը տասն և երկու որդի ունէր։ Նրանց անուններն են—1. Ռուբէն, 2. Շմաւոն, 3. Ղևի, 4. Յուդա, 5. Իսաքար, 6. Զաբուղոն, 7. Դան, 8. Նեփթաղիմ, 9. Գադ. 10. Ասեր, 11. Յովսէփ և 12. Բենեամին։ Յովսէփը և Բենիամինը Հռաքէլից էին ծնուած։ Յովսէփը տասն եօթն տարեկան էր և եղբայրների հետ ոչխարները էր արածացնում։ Նա պատմում էր հօրն այն սխալ բաները, որ եղբայրները գործում էին։ Յակովբը Յովսէփին բոլոր որդկերանցից աւելի էր սիրում—նրա համար ծաղկեայ պատմուճան կարել տուաւ։ Այս բանի վրայ եղբայրներն սկսեցին նախանձել։

Յովսէփը մի անգամ երազ տեսաւ ու պատմեց եղբայրներին։ Նա ասում էր. «Մենք դաշտում խուրձ էինք կապում. իմ կապած խուրձերը ուղիղ կանգնեցին, իսկ ձերը երկրպագութիւն էին տալիս իմերին։ Եղբայրները պատասխանեցին. «Մի՞թէ կամենում ես թագաւոր լի-

նել մեզ վրայ»։ Եղբայրները աւելի սկսեցին ատել Յովսէփին։ Նա մի երկրորդ երազ ևս պատմեց եղբայրներին։ «Ես տեսայ երազում, որ արևը, լուսինը և տասն ու մի աստղեր ինձ երկրպագութիւն էին տալիս»։ Այս բանի վրայ հայրը ևս բարկացաւ ու ասաց. «Այդ ի՞նչ երազ է, մի՞թէ ես, մայրդ, եղբայրներդ պէտք է քեզ երկրպագութիւն տանք»։ Եղբայրների ատելութիւնը չափից դուրս զօրացաւ։

Ռ. Յովսէփի եղբայրները Սիւքէմ հովտում արածացնում էին իրանց հօր խաշները, իսկ Յովսէփը տանն էր։ Մի օր Յակովբն ասաց Յովսէփին. «Գնա՛ եղբայրներիդ մօտ և իմացիր, թէ ի՞նչպէս է նրանց առողջութիւնը և ինձ մի համբաւ բեր»։ Յովսէփը գնաց։ Եղբայրները հեռուից տեսան նրան, սկսեցին ծաղրել ու ասել. «Ահա՛ երազատեսը գալիս է, եկէ՛ք սպանենք նրան և ասեն մեր հօրը, թէ չար գազանները պատառել են—տեսնենք ի՞նչ կլինեն նրա երազները»։ Մեծ եղբայր Ռուբէնն ասաց. «Մի՛ սպանէք, այլ ձգեցէ՛ք այս անապատի անջուր փոսերից մինի մէջ»։ Նրա միտքն այն էր, որ Յովսէփին ծածուկ ազատէ և հօրը տանէ։ Երբ երազատեսը եղբայրների մօտ եկաւ, հանեցին նրա ծաղկեայ պատմուճանը՝ ձգեցին մի անջուր փոսի մէջ և հացի նստեցին։

Այդ միջոցին մի խումբ իսմայէլացի վաճառականներ էին գալիս իրանց ուղտերով։ Նրանք գնում էին Եգիպտոս։ Յուդան խօսեց եղբայրների հետ ու ասաց։ «Մեզ ի՞նչ շահ սրա սպանելուց, եկէ՛ք ծախենք այս վաճառականներին»։ Այս մտքին ամենքն էլ հաւանեցան։ Յովսէփին դուրս հանեցին փոսից և քսան դահեկանով ծախեցին։ Այդ ժամանակ Ռուբէնն այդտեղ չէր. եղբայր-

ներից ծածուկ գնացել էր, որ Յովսէփին փոսից հանէ և հօրն ուղարկէ։ Բայց երբ փոսի մօտ եկաւ ու Յովսէփին այնտեղ չգտաւ, պատռեց շորերը. եկաւ եղբայրների մօտ և ասաց. «Պատանին փոսի մէջ չէ»։

Եռոյ եղբայրները մի ուլ մորթեցին. Յովսէփի շորերը արիւնի մէջ թաթախեցին ու հօրն

ուղարկեցին ասելով. «Այս միայն գտանք, տես, սա է քո որդու պատմուճանը՝ թէ ոչ»։

Յակովբը պատռեց իւր շորերը ու երկար ժամանակ սուգ էր անում։ Որդիները գալիս էին հօրը մխիթարելու, բայց նա պատասխանում էր. «Այս ցաւովն էլ պէտք է գերեզման իջնեմ իմ որդու մօտ»։

14. ՅՈՎՍԷՓԸ ՊԷՏԱՓՐԷՍԻ ՏԱՆԸ

Վաճառականները Յովսէփին Եգիպտոս տարան և վաճառեցին Փարաւոնի դահճապետ Պետափրէսի վրայ։ Աստուած Յովսէփին սիրում էր —ինչ որ անում էր, յաջողում էր նրան, այնպէս որ շուտով Պետափրէսի սիրելին դարձաւ։ Նա իւր տան ամբողջ կառավարութիւնը նրան յանձնեց։ Աստուած օրհնեց Եգիպտացու տունը Յովսէփի պատճառով։

Մի քանի ժամանակից եռոյ Յովսէփի և Պետափրէսի կնոջ մէջ անհամաձայնութիւն պատահեց։ Կինը գանգատուեց մարդուն և նա էլ հրամայեց նրան բանտ նստացնել՝ առանց քննելու։

15. ՅՈՎՍԷՓԻ ԲԱՐՁՐԱՆԱԼԸ

Ա. Աստուած Յովսէփին պաշտպանում էր — բանտապետին այնպիսի միտք տուաւ, որ նրան սիրում էր։ Սա բոլոր յանցաւորներին ու բանտը Յովսէփին էր յանձնել։

Մի քանի ժամանակից եռոյ թագաւորի տակառապետը և մատակարարը յանցանք գործեցին իրանց տիրոջ դէմ։ Թագաւորը երկուսի վրայ էս բարկացաւ ու բանտն ուղարկեց։ Մի գիշեր եր-

կունն էլ երազ տեսան։ Առաւօտը Յովսէփը ներանց մօտ եկաւ, շատ տխուր դուռ ու հարցրեց. «Ի՞նչ է ձեր տխրութեան պատճառը»։ Ներանք պատասխանեցին. «Երազ ենք տեսել, ոչ ոք չկայ որ մեկնէ»։ Յովսէփն ասաց. «Դա Աստծու գործն է, բայց և այնպէս ինձ էլ պատմեցէք»։

Տակառապետն առաջինն սկսաւ պատմել երազը. «Ես տեսայ երազումս մի որթ. նրա վրայ երեք հասած ողկոյզ կար. Փարաւոնի բաժակը ձեռիս էր. ողկուզի հատիկները ճմլում էի բաժակիս մէջ և թագաւորին էի տալիս»։ Յովսէփը պատասխանեց. «Քո երազի մեկնութիւնն այս է—երեք ողկոյզը երեք օր է նշանակում, որից յետոյ թագաւորը պաշտօնդ քեզ կյանձնէ։ Երբ գործդ յաջող անցնի, չմոռանաս ինձ—խնդրիր թագաւորին, որ ինձ ազատէ, ես յանցանք չունեմ. իզուր տեղը բանտ են ձգել ինձ»։

Մատակարարը երբ տեսաւ, որ Յովսէփն ընկերոջ երազին լաւ մեկնութիւն տուաւ, սիրտ առաւ, սկսաւ ինքն էլ պատմել. «Ես էլ տեսայ երազումս երեք խան գլխիս դրած. վերին խանի մէջ հացագործի պատրաստած՝ թագաւորի ախորած կերակուրներն էին. այս վերջին խանի կերակուրներից գալիս և ուտում էին թռչունները»։ Քո երազի մեկնութիւնն էլ այս է—երեք խանը երեք օր է նշանակում. երեք օրից յետոյ Փարաւոնը գլուխդ կտրել կտայ. մարմինդ փայտից կըկախէ. թռչունները կգան և կուտեն քո դիակը»։

Ի՛սկ երեք օր այդ բանից յետոյ՝ թագաւորի ծննդեան տօնն էր։ Թագաւորն ուրախութեան մէջ յիշեց տակառապետին և մատակարարին ա—առաջինին իւր պաշտօնը յանձնեց, իսկ երկրորդին՝ փայտից կախել տուաւ։ Բայց տակառապետը ուրախութիւնից մոռացաւ Յովսէփին։

Բ. Երկու տարուց յետոյ Փարաւոնը մի երազ տեսաւ, որպէս թէ ինքը կանգնած է Նեղոս գետի ափին, որտեղից դուրս եկան եօթը գեղեցիկ եւ գեր երինջ ու սկսեցին դաշտի վրայ արածել։ Սրանից յետոյ եօթը տգեղ եւ լրար երինջ դուրս եկան և կուլ տուին այն եօթը գեղեցիկ ու գեր երինջներին։ Փարաւոնը զարթեց ու նորից քընեց։

Երկրորդ անգամ երազ տեսաւ, որպէս թէ մի փնջից եօթը գեղեցիկ ու ընտիր հասկ դուրս եկան։ Յետոյ տեսաւ եօթը ժանգոտած եւ լրար հասկ դուրս եկան ու նախկին եօթը գեղեցիկ, ընտիր հասկերին կուլ տուին։ Փարաւոնը զարթեց, կանչել տուաւ Եգիպտոսի երազահաններին և պատմեց նրանց, բայց ոչ ոք չկարողացաւ մեկնել։

Այն ժամանակ տակառապետն ասաց. «Այ-

սոր յիշեցի իմ յանցանքը—երբ թագաւորն ինձ և մատակարարին բանտարկել տուաւ, գիշերը երկուսս էլ երազ տեսանք։ Մեզ մօտ մի երբայեցի տղայ եկաւ. մեր երազները մեկնեց և ինչպէս մեկնեց, այնպէս էլ կատարուեց—ես իմ պաշտօնն ստացայ, իսկ մատակարարը փայտից կախուեց»։

Թագաւորը կանչել տուաւ Յովսէփին։ Բանտից դուրս բերին և իրան ներկայացրին։ Թագաւորն ասաց. «Ես երազ եմ տեսել, ոչ ոք չէ կարողանում մեկնել. ինձ պատմեցին՝ եթէ դու երազս լսես, կարող ես մեկնել»։ Յովսէփը պատասխանեց. «Տէր արքայ, ինքս ոչինչ չեմ կարող անել, այդ Աստծու գործն է»։

Փարաւոնը պատմեց Յովսէփին իւր երազները։ Յովսէփը պատասխանեց. «Երկու երազն էլ միևնոյն նշանակութիւնն ունին։ Եօթը տարի Եգիպտոսում առատութիւն կլինի, իսկ եօթը տարի՝ սով։ Առատութեան տարիները կանցնեն, սովի տարիներում մարդիկ կկերակրուեն առատութեան տարիների բերքերով։ Ուրեմն, թագաւոր, պէտք է մի խելօք մարդ գտնես և Եգիպտոսի կառավարիչ նշանակես, որպէսզի առատութեան եօթը տարիներում կերակրի պաշար հաւաքէ եօթը սովի տարիների համար»։

Փարաւոնն ասաց Յովսէփին. «Էլ ով պէտք է լինի քեզնից խելօքը և իմաստունը. ամբողջ

Եգիպտոսը քեզ եմ յանձնում՝ միայն ես քեզնից մեծ կլիշուեմ»։

Սրանից ետոյ Փառաւոնը Յովսէփին իւր կառքի մէջ նստացնել տուաւ և հրամայեց քա-

ղաքի մէջ շրջել և յայտարարել, որ Յովսէփը իւր երկրորդն է։ Թագաւորի հրամանը կատարուեց—ամենքն էլ ծունկ էին չոքում նրա առաջ։ Քուրմերի աղջիկներից մէկի հետ էլ ամուսնացրեց, որից երկու որդի ունեցաւ՝ Եփրեմ եւ Մանասէ։

Յովսէփը երեսուն տարեկան էր։ Լիւթեան եօթը տարիներում Յովսէփը ժողովել տուաւ ցորենը Փարաւոնի շտեմարանների մէջ։ Ժողոված ցորենը նման էր ծովի աւազին։

Անցան լիւթեան և եկան սովի տարիները։ Ժողովուրդն աղաղակում և հաց էր խնդրում թագաւորից։ Փարաւոնը պատասխանեց եգիպտացիներին. «Գնացէք Յովսէփի մօտ և ինչ որ ձեզ ասէ, այնպէս էլ արէք»։ Յովսէփը բաց անել տուաւ շտեմարանների բերանները ամեն տեղ և ցորեն էր ծախում եգիպտացիներին։ Հեռաւոր երկրներից ևս Եգիպտոս էին գալիս ցորեն գնելու։

16. ՅՈՎՍԷՓԻ ԵՂԲԱՅՐՆԵՐԸ ԳԱԼԻՍ ԵՆ ԵԳԻՊՏՈՍ

Ա. Քանանացւոց երկրում ևս սով էր ընկել։ Յակովբը կանչեց իւր որդիներին և ասաց. «Գնացէք Եգիպտոս ցորեն գնելու, որ սովից չը-

մեռնենք»։ Յովսէփի տասն եղբայրները Եգիպտոս գնացին ցորեն գնելու։ Յակովբը Բենիամինին չուղարկեց միւսների հետ, որովհետև վախենում էր թէ մի գուցէ փորձանք պատահէ նրան։

Յովսէփի եղբայրները Եգիպտոս եկան։ Նրանք Յովսէփին չճանաչեցին. երկրպագութիւնը տուին և գլուխները քաշ՝ նրա առաջ կանգնեցին, իսկ Յովսէփն իսկոյն ճանաչեց և յիշեց իւր տեսած երազը։ Նա իբրև օտար ներկայացաւ, խիստ լեզուով խօսեց նրանց հետ և հարցրեց. «Ո՞րտեղից էք գալիս»։ Նրանք պատասխանեցին. «Քանանացւոց երկրից, որ ցորեն գնենք»։ Յովսէփն ասաց. «Դուք լրտեսներ էք, եկել էք իմանալու, թէ մեր երկիրն ինչ վիճակի մէջ է»։ Նրանք ասացին. «Ոչ, տէր, քո ծառաները եկել են ցորեն գնելու. լրտեսներ չենք. մենք տասներկու եղբայր ենք՝ մի հօր որդի. կրտսեր եղբայրներս տանն է՝ հօր մօտ, իսկ միւսը՝ այլ ևս չկայ»։ Յովսէփը կրկնեց. «Դուք լրտեսներ էք և երեք օր բանտարկեց նրանց։

Երկրորդ օրը Նովսէփն ասաց նրանց. «Ձեզանից մէկը բանտում կապուած կմնայ, իսկ միւսներդ տուն կգնաք։ Վերադարձին ձեր կրտսեր եղբօրն ինձ մօտ կբերէք, այն ժամանակ միայն կհաւատամ ձեզ»։ Եղբայրներն սկսեցին միմեանց նայել և ասել. «Այս բոլոր անբաղդութիւնը Յովսէփի պատճառովն է»։

Նրանք այնպէս էին կարծում, թէ Յովսէփն իրանց լեզուն չէ հասկանում, որովհետև թարգմանի բերանով էր խօսում։ Յովսէփը երեսը շուռ տուաւ և սկսեց լալ։ Ետոյ նրանց աչքի առաջ Շմաւոնին կապել տուաւ, հրամայեց տոպրակները ցորենով լցնել և իւրաքանչիւրի ցորենի գինն էլ պարկի մէջ դնել։

Ռ. Եղբայրները ցորենը բեռնեցին էշերին և սկսեցին հեռանալ Եգիպտոսից։ Ճանապարհին նրանցից մէկը իշին կերակուր տալիս՝ բաց արաւ

պարկի բերանը և տեսաւ ցորենի գինն այնտեղ է դրած։ Իսկոյն իմաց տուաւ եղբայրներին։ Երկիւղից ամենքը զարհուրեցան ու ասում-էին իրար։ «Այս ինչ փորձանք է, որ Աստուած մեր գլխին է բերում»։

Երբ տուն հասան՝ այս ամենը պատմեցին հօրը։

Պարկերի բերանները բաց անելիս՝ իւրաքանչիւրը ցորենի գինը իւր տոպրակի մէջ գտաւ։ Ամենքն էլ զարհուրանքի մէջ էին։ Հայրն ասաց. «Դուք ինձ անորդի արիք։ Յովսէփը և Շմաւոնը չկան, հիմայ էլ Բենիամինին էք ուզում տանել։ Զէ, նրան չեմ թոյլ տայ, նա միայն է մնացել Հռաքէլից. եթէ ճանապարհին մի վտանգ պատահէ, ես այլ ևս չեմ կարող ապրել»։

Գ. Սովը սաստկանում էր Քանանացւոց երկրում։ Բերած ցորենը վերջացաւ։ Յակովբն ասաց իւր որդիներին. «Էլի գնացէք Եգիպտոս ու կերակուր գնեցէք»։ Յուդան պատասխանեց. «Այն երկրի իշխանը մեզ ասաց—եթէ ձեր փոքր եղբօրը հետներդ չբերէք, երեսս չտեսնէք։ Թոյլ տուր, հայրիկ, Բենիամինն էլ մեզ հետ գալ—ինձնից պահանջիր, եթէ նրան մի բան պատահէ»։

Յակովբը պատասխանեց. «Ուրեմն այնպէս արէք, ինչպէս ուզում էք—միայն վեր առէք հետներդ մեր երկրի ընտիր բերքերից և իշխանին ընծայ տարէք։ Զմոռանաք ձեր պարկերում

գտեուած փողը կա՝ տա՛նել. ուրիշ փող էլ առէ՛ք հետներդ»։ Եղբայրները ճանապարհ ընկան դէպի Եգիպտոս և ներկայացան Յովսէփին։

Դ. Երբ Յովսէփը իւր եղբայրներին և Բենիամինին տեսաւ, ասաց հազարապետին. «Տուն տար այս մարդկանց և հացի պատրաստութիւն տես,—որանք ինձ մօտ պէտք է ճաշեն»։

Երբ Յովսէփը տուն եկաւ, եղբայրներն ընծաներն առան և երեսների վրայ ընկած երկրպագութիւն տուին։ Նա սիրով ողջունեց և ասաց. «Ի՞նչպէս է ձեր ծերունի հայրը»։ Նրանք պատասխանեցին. «Մեր հայրը՝ քո ծառան կենդանի է դեռ և առողջ» ու գլուխ տուին։ Յովսէփը նայեց,ճանաչեց Բենիամինին ու ասաց. «Կարծեմ սա՛ պէտք է լինի ձեր կրտսեր եղբայրը»։ Յովսէփը հեռացաւ իւր սենեակը ու սկսաւ լաց լինել։ Եռոյ երեսը լուաց. դուրս եկաւ ու պատուիրեց հաց բերեն։ Ամեն մէկի համար առանձին-առանձին ճաշ բերին։

Յովսէփի եղբայրներին իրանց տարիքի համաձայն նստացրին—առաջ մեծերին, եռոյ՝ կարգով փոքրերին ու սկսեցին կերակուր բաժանել։ Բենիամինի բաժինը հինգ անգամ աւելի էր լցրած։ Այս բանի վրայ եղբայրները շատ զարմացան։

17. ՅՈՎՍԷՓԸ ՅԱՅՏՆԻՈՒՄ Է ԵՂԲԱՅՐՆԵՐԻՆ

Ա. Յովսէփը ծածուկ հրամայեց հազարապետին և ասաց. «Դրանց պարկերը լցնել տուր ցորենով և իւրաքանչիւրի փողն էլ իրա պարկի մէջ դիր, իսկ իմ սկիհը՝ կրտսեր եղբօր պարկի մէջ։ Հազարապետը կատարեց Յովսէփի հրամանը։ Հետևեալ օրը եղբայրները ճանապարհ ընկան դէպի տուն։ Դեռ քաղաքից նոր էին դուրս եկել, որ Յովսէփը հազարապետին կանչեց ու ասաց. «Հասի՛ր այն մարդկանցն ու ասա՝—ինչո՞ւ իմ տիրոջ սկիհը գողացաք»։

Հազարապետը հասաւ նրանց և այնպէս էլ ասաց։ Եղբայրները զարհուրած պատասխանեցին. «Աստուած մի՛ արասցէ, որ մենք այդպիսի բան արած լինենք։ Ում մօտ սկիհը գտնուի, թող նա մեռնի, իսկ միւսները քո տիրոջ ծառաները լինեն»։ Նա պատասխանեց. «Ո՛չ, ում մօտ սկիհը գտնուի, իմ տիրոջ ծառան կլինի, իսկ միւսներդ ազատ էք»։

Շտապով վեր բերին պարկերը։ Հազարապետը նայեց՝ մեծից մինչև փոքրը։ Բենիամինի պարկի մէջ գտաւ սկիհը։ Եղբայրները սկսեցին իրանց շորերը պատառել—ամեն մէկը իւր էշը բեռնեց ու նորից վերադարձան Եգիպտոս։

Բ. Յուդան եղբայրների հետ դարձաւ Յովսէփի մօտ։ Յովսէփն ասաց. «Այդ ի՞նչ արիք»։

Յուդան պատասխանեց. «Ի՞նչ պատասխանենք կամ ինչպէս արդարանանք. ահա այստեղ ենք ամենքս և նա, որի մօտ սկիհը գտնուեց—մենք ամենքս էլ քո ծառաներն ենք»։

Իսկ Յովսէփը պատասխանեց. «Այդպիսի բան ես չեմ անի, որի մօտ սկիհը գտնուել է, նա միայն կլինի իմ ծառան, իսկ միւսներդ ազատ էք»։

Այն ժամանակ Յուդան մօտեցաւ նրան և ասաց. «Տէր, թոյլ տուր ծառայիդ քո առաջ մի խօսք ասելու։ Մենք առաջ քեզ ասացինք, որ տանը ծերունի հայր և կրտսեր եղբայր ունենք և թէ մեր հայրը նրան շատ է սիրում։ Դու մեզ պատասխանեցիր, եթէ ձեր կրտսեր եղբօրն ինձ մօտ չբերէք, երեսս չտեսնէք։ Մենք հարցրինք մեր հօրը և կամենում էինք նրան ևս բերել։ Բայց նա ասաց մեզ—գիտէք որ Հռաքէլը երկու որդի ծնաւ—մինից զրկուեցի, հիմա էլ սրան էք ուզում տանել։ Եթէ ճանապարհին մի անբաղտութիւն պատահէ, ես էլ չեմ ապրի։ Ես՝ քո ծառան երաշխաւոր եղայ հօրս։ Դրա համար էլ ինձ ընդունիր մանկան փոխանակ որպէս ծառայ, իսկ նա թող եղբայրների հետ հօր մօտ դառնայ—ինչպէս տեսնեմ ես այն սրտնեղութիւնը, երբ ծերունի հայրս Բենիամինին մեզ հետ չտեսնէ»։

Յովսէփն էլ երկար չկարողացաւ իրան պահել, հրամայեց բոլոր եգիպտացիներին դուրս

գնալ։ սկսաւ բարձր ցայտով լաց լինել և յայտնել եղբայրներին. «Ես Յովսէփն եմ»։ Եղբայրները խիստ վախեցան. չգիտէին, թէ ինչ անեն։ Յովսէփը շարունակեց. «Մօտ եկէք. ես Յովսէփն եմ՝ ձեր եղբայրը. մի՛ վախէք. տուն շտապեցէք և ասացէք հօրս, որ Աստուած ինձ ամբողջ Եգիպտոսին տէր է դարձրել—արի՛ շուտով ինձ մօտ։ Պատմեցէք հօրս՝ ինչ որ տեսաք և ասացէք, որ նա Գեսեմում կընակուի։

Նա ընկաւ Բենիամինի վզովն ու երկար ժամանակ լաց էր լինում։ Յովսէփը համբուրեց բոլոր եղբայրներին և շարունակ լաց էր լինում։

Դ. Երբ Փարաւոնն լսեցաւ Յովսէփի եղբայրների գալը, շատ ուրախացաւ։ Նա Յովսէփի բերանով յայտնեց եղբայրներին, որ շտապեն Քանան և հօրը Եգիպտոս բերեն—նա խոստացաւ նրանց շատ բարութիւններ անել։

Յովսէփը կառքեր տուաւ, նմանապէս ճանապարհի պաշար։ Բացի դրանից հօր համար տասն էշ ուղարկեց՝ բարձած Եգիպտոսի բարիքներով. նոյնպէս տասն ջորի ցորենով։

Եղբայրները հեռացան Եգիպտոսից. եկան Քանան և պատմեցին հօրը գլխներովն անցածը։ Յակովբն սկզբում չէր հաւատում, բայց երբ կորած որդու ուղարկած կառքերը տեսաւ, սթափուեց ու ասաց. «Մի՞թէ իմ Յովսէփը կենդանի է, շտապեմ նրան տեսնել՝ քանի որ չեմ մեռել»։

18. ՅԱԿՈՎԲԸ ԵԳԻՊՏՈՍՈՒՄ

Ա. Յակովբը տեղափոխուեց Եգիպտոս 66 հոգւով։ Երբ Եգիպտոսի և Քանանի սահմանի մօտ գտնուող Բերսաբէ քաղաքը հասաւ, Աստուած ասաց նրան տեսիլքում. «Ես քո հօր ամենակարող Աստուածն եմ, մի վախենա, գնա Եգիպտոս. այնտեղ քեզ մեծ ազգ կդարձնեմ—ես քեզ հետ եմ գալիս»։

Այս խօսքերից ետոյ Յակովբը հեռացաւ

Բերսաբէից. Յուդային առաջուց Յովսէփի մօտ ուղարկեց իւր գալուստը յայտնելու։ Յովսէփն այս լուրն առնելուն պէս՝ խակոյն լծել տուաւ կառքը և եկաւ հօրն ընդունելու։ Երբ Յովսէփը հօրը տեսաւ, վզովն ընկաւ ու երկար ժամանակ լաց էր լինում։ Յակովբն ասաց. «Հիմա հանգիստ կմեռնեմ՝ քեզ տեսնելուց ետոյ»։ Սրանից ետոյ Յովսէփն ասաց. «Ես շտապում եմ Փարաւոնին իմաց տալու ձեր գալուստը»։

Բ. Յովսէփն եկաւ Փարաւոնի մօտ և ասաց. «Իմ հայրն ու եղբայրները եկել են Քանանացուց երկրից ու Գեսեմումն են, թոյլ տուր գնամ նրանց ընդունեմ»։

Փարաւոնն ասաց Յովսէփին. «Քո հօր և եղբայրների համար իմ երկրի մէջ ամենալաւ տեղն ընտրիր—բնակեցրու նրանց Գեսեմում։ Եթէ քո եղբայրների մէջ քաջ մարդիկ կան, նշանակիր խաշներիս վրայ վերակացու»։

Յովսէփը հօրը Թագաւորին ներկայացրեց։ Փարաւոնը հարցրեց Յակովբին. «Քանի՞ տարեկան ես»։ Յակովբը պատասխանեց. «Թէև ես 130 տարեկան եմ, բայց կեանքումս մի լաւ օր չեմ տեսել»։ Յակովբն օրհնեց Թագաւորին և հեռացաւ։

Յովսէփը հօրն ու եղբայրներին բնակեցրեց Գեսեմում։

Դ. Յակովբը իւր ընտանիքի հետ 17 տարի բնակուեց Գեսեմում։ Երբ մահուան օրերը մօտեցան, կանչեց Յովսէփին ու ասաց. «Իմ մարմինը կտանես Քանան և կթաղես պապերիս մօտ՝ Կրկին-Այրում»։ Յովսէփը պատասխանեց։ «Այնպէս կանեմ, ինչպէս քո կամքն է»։

Սրանից ետոյ նորից իմաց տուին Յովսէփին, որ հայրը ծանր հիւանդ է։ Յովսէփը վեր առաւ իւր որդւոցը՝ Եփրեմին, Մանասէին ու գնաց հօր մօտ։ Յակովբը տեղից վեր կացաւ. նստեց անկողնի մէջ և ասաց Յովսէփին. «Քո երկու որդիները՝ Եփրեմն ու Մանասէն իմն են, ինչպէս Ռուբէնն ու Շմաւոնը»։ Նա որդեգրեց թոռներին, ձեռները գլխներին դրաւ՝ օրհնեց և ասաց. «Իմ հայրերի Աստուածը թող օրհնէ այս մանուկներին. որպէսզի սրանք աճեն և բազմանան երկրիս վրայ»։

Ետոյ Յովսէփի հետ խօսեց, մարգարէացաւ ու ասաց. «Ահա ես մեռնում եմ, բայց Աստուած մի օր նորից ձեր հայրերի երկիրը պիտի դարձնէ ձեզ»։

Այնուհետև Յակովբը կանչեց միւս որդիներին, օրհնեց իւրաքանչիւրին առանձին-առանձին և ասաց. «Ինձ կթաղէք Քանանացւոց երկրում՝ Կրկին-Այրի մէջ»։ Երբ իւր պատուէրը վերջացրեց, խփեց աչքերը և բաժանուեց ամենից։ Յովսէփն ընկաւ հօր վրայ և լաց էր լինում։

Եգիպտացիները նոյնպէս սգում էին Յակովբի

մահը եօթանասուն օր շարունակ։

Երբ սգի օրերն անցան, Յովսէփն ասաց Փարաւոնին. «Հայրս խնդրել է ինձ, որ նրան Քանանացւոց երկրում թաղեմ. ես գնում եմ. թաղելուց ետոյ՝ կվերադառնամ»։ Փարաւոնն ասաց. «Գնա և թաղել տուր քո հօրը»։

Յովսէփը մեծ բազմութիւնով ճանապարհ ընկաւ։ Դիակը տարան Քանանացւոց երկիրը և թաղեցին Կրկին-Այրի մէջ։ Թաղելուց ետոյ ամենքն էլ վերադարձան Եգիպտոս։

19. ՅՈՎՍԷՓԻ ՄԱՀԸ

Ա. Յակովբի մահուանից ետոյ եղբայրները վախենում էին Յովսէփից—նրանք ասում էին. «Յովսէփը մեր դէմ ոխ կունենայ»։ Սրա համար եկան նրա մօտ և ասացին. «Ներիր մեր յանցանքները»։ Այս բանի վրայ Յովսէփը սկսեց լաց լինել և ասել. «Մի վախենաք, դուք իմ մասին չարութիւն մտածեցիք, իսկ Աստուած՝ բարի։ Մի վախենաք, ես ձեզ էլ և ձեր որդւոցն էլ կկերակրեմ»։

Բ. Երբ Յովսէփը 110 տարեկան դարձաւ, ասաց եղբայրներին. «Ահա ես մեռնում եմ, Աստուած ձեզ մի օր պէտք է հանէ այս երկրից ու տանէ Քանանացւոց աշխարհը։ Երբ դուք տեղափոխուէք, չմոռանաք իմ ոսկորներն էլ ձեզ հետ տանելու»։

Յովսէփը մեռաւ։ Նրա մարմինը զմռսեցին և թաղեցին Եգիպտոսում։

ՆՈՐ ՈՒԽՏԻՑ

20. ԱՆԱՌԱԿ ՈՐԴՈՒ ԱՌԱԿԸ

Մի մարդ ունէր երկու որդի։ Մի օր փոքրն ասաց հօրը. «Տուր իմ բաժինը քո հարստութիւնից, ես այլ ևս չեմ կամենում քեզ մօտ ապրել»։ Հայրը տուաւ նրան իւր բաժինը։ Որդին իսկոյն հեռացաւ և գնաց ուրիշ երկիր ու այնտեղ իւր նման վատ տղերանց հետ ունեցածը փչացրեց՝ անկարգ կեանք վարելով։

Երբ հօրից ստացածը կերաւ, վերջացրեց, հէնց այդ ժամանակ էլ այն երկրում սաստիկ սով ընկաւ։ Փոքր որդին սկսաւ մուրացկանութիւն անել, բայց դրանով չկարողացաւ ապրել։ Ճարը կտրած՝ գնաց մի հեթանոսի մօտ ծառայ դարձաւ։ Սա էլ իւր խոզերը յանձնեց նրան, որ հանդը տանէ պահելու։ Հեթանոս պարոնը նրան հաց չէր տալիս, նա կերակրւում էր խոզերի կերածով, բայց այդ էլ դժուար էր ձեռք ընկնում։

Փոքր որդին սկսեց մտածել և ինքն իրան այսպէս էր ասում. «Այս ինչ արի ես, քանի քանի ծառաներ իմ հօր տանը ձրի հաց են ուտում, իսկ ես այստեղ սովամահ մեռնում եմ։ Կդառնամ հօրս մօտ և կասեմ նրան—հայր, ես մեղաւոր եմ քո և Աստծու առաջ, ես արժանի չեմ քեզ որդի կոչուելու, այլ՝ ինձ էլ համարիր քո ծառաներից մէկը»։

Սրանից ետոյ փոքր որդին դարձաւ հօր մօտ։ Հայրը հեռուից նկատեց նրան. ճանաչեց. առաջ վազեց. գրկեց և համբուրեց։ Որդին կարմրելով ասաց. «Ես մեղաւոր եմ քո և Աստծու առաջ, այլ ես արժանի չեմ քեզ որդի կոչուելու...»։ Մի ուրիշ հայր որ լինէր, չէր ընդունի անկարգ՝ անառակ որդուն, երեսովը կտար նրա վարմունքը, բայց սա բարի էր, կանչեց ծառաներին և ասաց. «Հանեցէք սրա հին շորերը և նորերը հագցրէք. մատանին դրէք մատին—այսուհետև նոր հայր ու որդի պիտի լինենք։ Նոր կօշիկներ հագցրէք. չաղ եզը մորթեցէք. կանչեցէք բարեկամներիս ուրախանանք, որովհետև սա մեռած էր անկարգութեան մէջ՝ այսօր կենդանացաւ սխալն ուղղելով, կորած էր, գտնուեց»։ Ծառաներն այդպէս էլ արին—ամենքն էլ սկսեցին ուրախանալ։

Այդ միջոցին մեծ որդին հանդուցեալ էր։ Երեկոյեան, երբ տուն դարձաւ, երգի և պարի

ձայներ լսեց։ Ծառաներից մէկին կանչեց իւր



մօտ և հարցրեց՝ թէ դա ինչ ուրախութիւն է։ Նա էլ պատասխանեց. «Եղբայրդ դարձել է, հայ-

ՐԸԴ չաղ եղը մորթել տուաւ և բարեկամների հետ ուրախանում են»։

Մեծ որդին՝ փոխանակ ուրախանալու, նախանձից տուն չմտաւ։ Նա այսպէս էր մտածում —եղբայրս որ եկել է, հայրս իւր հարստութիւնից նրան էլի բաժին կտայ։ Հայրը, որ կարող էր հրաժայել, դուրս գնաց, խնդրում, աղաչում էր մեծ որդուն ներս գալու։ Բայց մեծ որդին բարկացած այսպէս պատասխանեց. «Այս քանի տարի է քեզ ծառայում եմ. քո խօսքից երբէք դուրս չեմ եկել. դու ինձ մի ուլ էլ չտուիր, որ ընկերներիս հետ ուրախանամ, իսկ քո այդ անկարգ որդին, որ հարստութիւնդ կերաւ, փչացրեց, նրա համար չաղ եղն ես մորթել»։

Հայրը խրատելով պատասխանեց որդուն և ասաց. «Որդեակ, իմ բոլոր հարստութիւնը քոնն է, դու չպիտի տրտմես ու նախանձես եղբօրդ, այլ պէտք է ուրախանաս, որովհետև նա մեռած էր, կենդանացաւ, կորած էր, գտնուեց»։

Հայրը տրտմեց և ինքն իրան ասում էր. «Թէև փոքր որդիս ուղղեց իւր սխալը, տուն վերադարձաւ և մեղայ ասաց—նա գտնուեց, բայց փոխարէնը մեծ որդիս կորաւ։ Ես կարծում էի թէ նա խելօք է, երեւաց, որ նախանձոտ է, չէ ուրախանում եղբօր դարձի վրայ, այժմ նա դարձաւ անտակ—մէկին գտայ, միւսին կորցրի։

Փոքրիկ մանուկներ, եթէ դուք էլ սխալ բան անէք, փոքր որդու նման սխալներդ ուղղեցէք, որ բաղդաւոր լինիք։ Մեծ որդու նման նախանձոտ չլինիք—թէ ձեր եղբօր և թէ ուրիշի բաղդաւորութեան վրայ միշտ ուրախացէք։

21. ՏԱՄՆ ԿՈՅՍԵՐԻ ԱՌԱԿԸ

Մի անգամ Հրէաստանում մի հարստանիք կար։ Այդ երկրում հարստանիքը գիշերով էր լինում։ Հարսի տան ընկերուհիները հրաւիրուած էին հարստանիք—նրանք պատկուած չէին, այսինքն կոյս էին։ Երկրի սովորութիւնն այնպէս էր, որ փեսան իւր ընկերներով, հարսն էլ իւր ընկերուհիներով լապտերները վառած դուրս էին գալիս տանից և փողոցում մի տեղ պատահում էին իրար, եւոյ փեսան հարսին տանում էր հարսանքատուն։

Հարսի բոլոր տան ընկերուհիներն էլ վառած լապտերներ ունէին՝ ձէթով լիքը, բայց նրանցից հինգը՝ բացի վառած լապտերներից՝ հետները վերցրել էին և մի ամանով աւելորդ ձէթ, որ՝ եթէ փեսան ուշանալու լինի, այդ ձէթից ածեն լապտերների մէջ, որպէսզի չհանգչի։ Այն կոյսերը, որոնք զգոյշ էին գտնուել և հետները աւելորդ ձէթ էին վերցրել, նրանց անուանում-

ենք իմաստուն կոյսեր, այսինքն զգոյշ աղջիկներ, իսկ նրանք, որոնք մոռացել էին աւելորդ ձէթ վերցնել, անուանում ենք յիմար կոյսեր, այսինքն անզգոյշ աղջիկներ։

Բոլոր տաս կոյսերը լապտերները վառած դուրս եկան փողոց փեսային հանդիպելու։ Փեսան ուշացաւ—բոլորի քունն էլ տարաւ փողոցում։ Կէս գիշերին յանկարծ ձայն լսուեց, թէ փեսան գալիս է։ Կոյսերը զարթնեցին, տեսան որ լապտերները հանգչում են։ Իմաստուն կոյսերն իսկոյն իրենց հետ վերցրած աւելորդ ձէթն ածեցին լապտերների մէջ և նորոգեցին, իսկ յիմարների լապտերները քիչ էր մնում հանգչի։ Այն ժամանակ յիմար կոյսերը իմաստուններին խնդրեցին ու ասացին. «Ձեր ձէթիցը մի քիչ էլ մեզ տուէք, մեր լապտերները հանգչում են»։ Իմաստունները պատասխանեցին և ասացին. «Եթէ մեր ձէթիցը ձեզ էլ տանք, մեզ բաւական չի լինի—թէ ուզում էք, գնացէք ձէթ ծախողների մօտ և նրանցից գնեցէք»։

Երբ յիմար կոյսերը գնացին ձէթ գնելու, փեսան եկաւ, իմաստուն կոյսերին էլ հետն առաւ ու միասին գնացին հարսանքատուն—ներս մտան ու դուռը կողպեցին։

Յիմար կոյսերը գնացին ձէթ գնելու. նորոգեցին իրանց լապտերները. եկան հարսանքատուն. դուռը ծեծեցին և խնդրում էին, որ ի-

բանց եկ ներս թողնէ, բայց փեսան պատասխանեց նրանց և ասաց. «Ես ձեզ չեմ ճանաչում, թէ դուք ովքեր էք» և դուռը բաց չարաւ։ Նրանք մնացին դուրսը՝ փողոցում, լալիս էին և լսում թէ ինչպէս ներսը՝ ամենքն ուրախանում են։

Փոքրիկ մանուկներ, դուք էլ միշտ զգոյշ եղէք իմաստուն կոյսերի նման, յիմար կոյսերի պէս անզգոյշ չլինէք։

22. ՍԵՐՄՆԱՑԱՆԻ ԱՌԱԿԸ

Յիսուսի մօտ մեծ բազմութիւն էր գալիս նրա քարոզները լսելու։ Մի անգամ, երբ նա Գալիլիայի ծովի ափին էր, շատ խեղճ մարդիկ էին հաւաքուել, որ նրա խրատները լսեն։ Այստեղ Յիսուս նրանց մի առակ պատմեց—

Մի սերմնացան սկսեց սերմ ցանել։ Սերմերից մի քանիսն ընկան ճանապարհի վրայ, այնտեղ հողը կոշտ էր, այս պատճառով էլ սերմերը չկանաչեցին—թռչունները եկան և կերան։

Սերմերից մի քանիսն էլ ընկան քարքարոտ հողի մէջ. այստեղ թէև սերմերը կանաչեցին, բայց որովհետև հողի շերտը բարակ էր, արմատները շատ խորը չգնացին, երբ արևը տաքացաւ, բոյսերը շուտով չորացան։

Մի քանի սերմերը էլ ընկան փշոտ հողի մէջ

—այստեղ էլ սերմերը կանաչեցին, բայց փշերն

էլ հետը դուրս եկան, խեղդեցին բարի սերմերին և չթողին պտուղ տալ։

Իսկ մի քանիսն էլ ընկան լաւ տեղ, ուր հողը փափուկ էր և շերտը հաստ, ոչ քարեր կային և ոչ փշեր։ Այստեղ սերմերը կանաչեցին և պտուղ տուին՝ որը հարիւր, որը վաթսուն և որը երեսուն։

Փոքրիկ մանուկներ, դուք էլ ձեր սրտերը չորրորդ ագարակի նման պիտի պատրաստէք, որ երբ ուսուցիչը սերմանացանի նման բարի խրատներ ցանէ ձեր մէջ, պտուղներ տան։

23. ՔԱՆՔԱՐՆԵՐԻ ԱՌԱԿը

Մի հարուստ մարդ օտար երկիր էր գնում։ Կանչեց ծառաներին և իւր փողերը նրանց յանձնեց—մէկին տուաւ հինգ քանքար (10.000 ռբլ.), միւսին՝ երկու (4.000), իսկ երրորդին՝ մի (2.000) իւրաքանչիւրին իւր շնորհքի համեմատ և շտապով հեռացաւ։

Հինգ քանքար ստացողը գործ սկսեց և նրանով ուրիշ հինգ քանքար էլ աշխատեց։ Երկու քանքար ստացողն էլ գործ սկսեց և աշխատեց էլի երկու քանքար։ Իսկ մի քանքար ստացողը

գետինը փորեց և տիրոջ տուած քանքարը թաղեց, գործ չդրաւ փողը։

Մի քանի ժամանակից ետոյ տէրը տուն վերադարձաւ և ծառաներից հաշիւ պահանջեց։ Հինգ քանքար ստացողն եկաւ և այսպէս հաշիւ

տուեց. «Տէր, դու ինձ հինգ քանքար տուիր. ես դրանով գործ սկսեցի և ուրիշ հինգ քանքար էլ աշխատեցի—ահա քո փողը»։ Տէրը գովեց ծառային և ասաց. «Բարի և հաւատարիմ ծառայ, որովհետև դու փոքր գործի մէջ հաւատարիմ եղար, այսուհետև մեծ գործերի վրայ կառավա-

ըիչ կնշանակեմ։ Ես այսքան տարի հեռացել էի տանից. հիմա որ վերադարձել եմ, իմ բարեկամների համար մեծ ճաշ եմ պատրաստել՝ միասին ուրախանալու։ Թէև դու բարիկամ չես, բայց և այնպէս համեցէք արա և մասնակից եղիր մեր ուրախութեանը»։

Մօտ եկաւ երկու քանքար ստացողը։ Նա էլ հաշիւ տուեց ու ասաց. «Տէր, դու ինձ երկու քանքար տուիր. ես դրանով գործ սկսեցի և ուրիշ երկու քանքար էլ աշխատեցի—ահա քո փողը»։ Տէրը սրան էլ գովեց և ասաց. «Բարի և հաւատարիմ ծառայ, որովհետև դու փոքր գործի մէջ հաւատարիմ եղար, այսուհետև մեծ գործերի վրայ կառավարիչ կնշանակեմ. եկ, դու ևս մասնակից եղիր իմ ուրախութեան ճաշին»։

Վերջը մօտեցաւ մի քանքար ստացողն ու ասաց. «Տէր, ես գիտէի, որ դու խիստ մարդ ես—հնձում ես այնտեղից, ուր չես ցանել և հաւաքում ես, ուր չես փռել, ուստի վախեցայ քեզնից և քո տուած քանքարը գետնի մէջ թաղեցի—ահա քո տուած փողը»։ Տէրը բարկացաւ նրա վրայ և ասաց. «Չար և վատ ծառայ, երբ դու գիտէիր, որ ես հնձում եմ չցանած տեղից և հաւաքում եմ, ուր չեմ փռել, ինչու իմ փողն ստացար, ինչու չյանձնեցիր սեղանաւորին, որ ես նրանից այժմ տոկոսով ստանայի»։ Տէրն իսկոյն հրամայեց միւս ծառաներին և ա-

սաց. «Առէք այդ անպիտան ծառայից քանքարը և տուէք տասն քանքար ունեցողին, իսկ իրան ձգեցէք մութ և ցուրտ սենեակը, թող այնտեղ լաց լինի և ատամները կրճատցնէ»։

———

Փոքրիկ մանուկներ, Աստուած էլ ձեզ շնորհ է տուել—դուք պէտք է նրա տուած շնորհը գործ դնէք և ոչ թէ այն վատ ծառայի նման թաղէք հողի մէջ։ Ով Աստծու տուած շնորհը գործ կդնէ, էլ աւելի շնորհ կստանայ, իսկ ով շնորհը գործ չի դնի, եղածիցն էլ կզրկուի։

ՊԵՏ. ԿԱՆ. ՊԱՏՄ. ԳՐՍՆ
ГСС Библиотека
ZUUՌ-Арм ССР
Ս. ԻՄ. Ա. ՄԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ՑԱՆԿ

ՀԻՆ-ՈՒԽՏ

Երես

Յառաջաբան 3
1. Աստուած կանչում է Աբրահամին . 5
2. Աբրահամը և Ղովտը բաժանւում են իրարից 6
3. Աբրահամը ազատում է Ղովտին . . 7
4. Իսահակի ծնունդը և զոհուիլը . . 8
5. Սառայի մահը 11
6. Իսահակի ամուսնութիւնը և Աբրահամի մահը 13
7. Եսաւ և Յակովբ 16
8. Յակովբի խաբեբայութիւնը . . . 17
9. Յակովբի փախուստը. 20
10. Յակովբը Լաբանի մօտ 23
11. Յակովբի դարձը Խառանից . . . 25
12. Եսաւի և Յակովբի հաշտութիւնը . 27
13. Յովսէփի եղբայրները և նրա վաճառումը 29
14. Յովսէփը Պետափրէսի տանը . . . 33
15. Յովսէփի բարձրանալը 33
16. Յովսէփի եղբայրները գալիս են Եգիպտոս 37
17. Յովսէփը յայտնւում է եղբայրներին 42
18. Յակովբը Եգիպտոսում 46
19. Յովսէփի մահը 50

ՆՈՐ-ՈՒԽՏ

20. Անառակ որդու առակը 51
21. Տասն կոյսերի առակը 55
22. Սերմանացանի առակը 58
23. Քանքարների առակը. 60

41864
գրա-ա 5769
407

ԻՄ ԱՇԽԱՏԱՍԻՐԱԾ ԿՐՕՆԻ ԴԱՍԱԳՐԵՐԸ

I. ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՀԱՄԱՐ

	գին ն է Ռ. Կ.		զեղչ %
Սեռին երջան			
1. Ուղեցոյց Հին—Ուխտի մասն Ա.	»	80	25
2. Ուղեցոյց Հին—Ուխտի մասն Բ.	»	85	25
3. Ուղեցոյց Նոր—Ուխտի մասն Ա.	1	»	35
4. Ուղեցոյց Նոր—Ուխտի մասն Բ.	1	5	
Միջին երջան			
5. Դասագիրք կրօնի հատոր Դ.	1	50	
6. Դասագիրք կրօնի հատոր Ե.	»	50	
7. Տան պատուիրան	»	50	

II. ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ա. Ծխական դպրոցների համար			
8. Դասատետր կրօնի Ա. տարի	»	25	25
9. Դասատետր կրօնի Բ. տարի	»	25	
10. Դասատետր կրօնի Գ. տարի	»	25	
11. Դասատետր կրօնի Դ. տարի	»	30	
բ. Պետական դպրոցների համար			
12. Դասատետր կրօնի Ա. տարի	»	25	
13. Դասատետր կրօնի Բ. տարի	»	25	
14. Դասատետր կրօնի Գ. տարի (ոչ պատ-կերազարդ)	»	30	
գ. Ծխական եւ պետական դպր. համար			
15. Հին—Ուխտ	»	50	25
16. Նոր—Ուխտ	»	45	
17. Գործք—Առաքելոց	»	45	
դ. Տաճկահայ դպրոցների համար			
18. Հին—Ուխտ	»	45	
19. Նոր—Ուխտ	»	45	
20. Բարոյախօսութիւն (էթիկայ)	»	50	35
21. Մի քանի խօսք հայ կրօնուսոյցներին	»	10	

ՅԱՆԿԱՑՈՂՆԵՐԸ ԿԱՐՈՂ ԵՆ ԴԻՄԵԼ

1. Ինձ—Սահակ ա. քհ. Սահակեանց. Бебутовская № 20.
2. «Գիր» և միւս հայ գրավաճառներին։
3. Պահեստը գտնւում է «Գիր» գրավաճառանոցում,

ԳԻՆՆ Է 25 ԿՈՊԷԿ

(075)
Ս-75
ՀՀ Ազգային գրադարան
NL0157155